

Հարգելի պարոն Գայջյան.

Ի պատասխան Ձեր 05.11.2019թ. հ.01/414 գրության՝ տեղեկացվում է, որ «Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ-ում Էրեբունի ամրոցի, Կարմիր բլուր և Շենգավիթ հնավայրերի հանրահռչակման և այցելուների, այդ թվում՝ զբոսաշրջիկների համար առավել գրավիչ դարձնելու ուղղությամբ 2018թ. հոկտեմբերից մինչ այժմ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Իրականացվել են երեք հուշարձանների պահպանության, մաքրման, ամրակայման, ֆոնդային, ցուցադրական, կրթական, էքսկուրսիոն, մասսայական, սպասարկման, գիտագործնական, գիտահետազոտական, մարկետինգի, հանրահռչակման աշխատանքներ
- Էլեկտրոնային շտեմարան է մուտքագրվել 775 առարկա
- Վերականգնվել է 128 առարկա
- Պատրաստվել է 236 առարկայի գիտական անձնագիր
- Թանգարանը մասնակցել է Երևանում ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովի շրջանակներում կազմակերպված միջոցառումներին, հուշարձանների միջազային օրվա, թանգարանների միջազգային օրվա և թանգարանների գիշերվա, եվրոպական ժառանգության օրեր, «Թանգարանային շարաթ. վերանայելով մշակութային տարածքները» խորագրով միջոցառումների շարքին
- Առաջին անգամ Շենգավիթ հնավայրը միացել է թանգարանների միջազգային օրվա և թանգարանային եվրոպական գիշեր, եվրոպական ժառանգության օրեր միջոցառումներին
- Կազմակերպվել են ցուցահանդեսներ՝ «Էրեբունու գանձերը», «Հողարվեստի ստեղծագործություններ»
- Ցուցասրահում բացվել է ձևերով և ուրարտական զինվորով մարտակառքը
- Թանգարանի կայքում, ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերում հանրահռչակվել են թանգարանի գործունեության հետ կապված նշանակալից իրադարձությունները
- Wikipedia.org կայքում, Էրեբունի-Երևանի 2800-ամյակին նվիրված՝ «Վիքին սիրում է Երևանը» նախաձեռնության շրջանակներում, տեղադրվել են հոդվածներ Էրեբունի, Կարմիր բլուր, Շենգավիթ հնավայրերի և թանգարանների մասին
- Կարմիր բլուր հնավայրի մուտքի մոտ տեղադրվել է մետաղյա վահանակ՝ հայերեն և անգլերեն լեզուներով
- Կարմիր բլուր հնավայրի տարածքում կազմակերպվել են նետաձգության ցուցադրական ելույթներ
- Մաքրվել են թանգարանի և միջնաբերդի հարակից տարածքները, կատարվել են՝ կանաչ տարածքների ռոտոում, թանգարանի հարակից պատերի տեղաշարժված և ընկած քարերի տեղադրում, վերանորոգվել է միջնաբերդի պահակակետի տանիքը, փոխվել են ցուցասրահի և տարածքի այրված լամպերը, անցկացվել է ռոտոման համակարգ, փոխվել են թանգարանի ցուցադրության, մուտքի աստիճանների ամրոցի և ամրոց տանող ճանապարհի էլեկտրասյուների այրված լամպերը, ցանկապատվել է արգելոցի բաց տարածքի մի հատվածը, բարեկարգվել է թանգարանի բակը, գործարկվել է Էրեբունի ամրոցի տարածքում գտնվող զուգարանը, ամրոցի պալատական հատվածի վտանգավոր սենյակների մուտքը փակելու համար պատրաստվել է 5 ճաղավանդակ, ներկվել են «Շենգավիթ» մասնաձյուղի նստարանները
- Երևանի հյուրանոցներում տեղադրվել են թանգարանի վերաբերյալ տեղեկատվական թոուցիկներ

- Թանգարանի կայքում, ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերում հանրահռչակվել են թանգարանի գործունեության հետ կապված նշանակալից իրադարձությունները
- Հուշանվերների կրպակը համայնվել է նոր հուշանվերներով, մասնավորապես՝ նվիրված Էրեբունի թանգարանի 50-ամյակին և Էրեբունի-Երևանի 2800-ամյակին
- Մեկնարկել են Կարմիր բլուր հնավայրի տարածքի աղբահանման և մաքրման աշխատանքները՝ տեղափոխվել է 168 մեքենա շինադր
- Տեղադրվել է Շենգավիթ հնավայրի առաջին եռաչափ ցուցանակը
- Վերսկսվել են «Պատանի հնագետ» դպրոցի դասընթացները, իրականացվել են «Եկեք գրենք ուրարտերեն», «Արի պեղենք միասին» կրթական ծրագրերը
- Կազմակերպվել է վարպետաց դաս՝ «Կավագործության ավանդույթները»
- Արդիականացման փուլում է թանգարանի կայքը, ընթացքի մեջ է քառալեզու, եռաչափ վերակազմություններով 16 բացատրական ցուցանակների տեղադրման գործընթացը, արդիականացվում է թանգարանի մշտական ցուցադրությունը
- Թանգարանի և հնավայրերի հանրահռչակման նպատակով տպագրվել են բազմալեզու տեղեկատվական թերթիկներ, իսկ Երևան քաղաքի զբոսաշրջային քարտեզներում, որն անվճար տրամադրվում է Հայաստան այցելող զբոսաշրջիկներին, ներառվել է թանգարանի և հնավայրերի մասին համապատասխան տեղեկատվությունը
- Նշված ժամանակահատվածում թանգարան են այցելել 29785 այցելու, այդ թվում՝ զբոսաշրջիկներ, իրականացվել է 1670 էքսկուրսիա, որից՝ ռուսերեն՝ 395, անգլերեն՝ 275, ֆրանսերեն՝ 71, իսպաներեն՝ 14 և գերմաներեն՝ 48:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ